

Ավելի քան սնունդ

Անվճար կամ զեղչված գներով սննդի դիմումնագիր լրացնելն ազդում է բազմաթիվ ոլորտների վրա՝ ահա տեսք ինքներդ:

Ֆինանսավորում դպրոցների համար

Լրացուցիչ ֆինանսավորումն օգնում է աշակերտներին ստանալ անհրաժեշտ աջակցությունը դպրոցում:



Վճարում քուլեջի կամ համալսարանի ընդունելության դիմումնագրի համար

Զեղչված գներ քուլեջի կամ համալսարանի դիմումնագրերի համար:

Վճարում SAT, ACT, AP քննությունները հանձնելու համար

Կրթական այս քննությունները հանձնելու համար կարելի է զեղչված գին վճարել:

Համացանցային կապ

Հնարավոր է զեղչված գին վճարել համացանցից օգտվելու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար հյուրընկալել www.getemergencybroadband.org կայքը:

Մենդավճար

Ընտանիքները կարող են համաճարակի հետ կապված սնունդ ստանալ հյուրընկալելով <https://capandemic-ebt.org> կայքը կամ զանգահարելով 877-328-9677

Երեխաների խնամք/վճարում ճամբարի համար

Առկա են զեղչեր կամ վճարումների չեղյալ համարում երեխաների խնամքի համար: Ծանոթացեք ձեր շրջանի կազմակերպությունների հետ:

Լրացնել դիմումնագիր

Հյուրընկալել <https://family.titank12.com> կայքն առցանց դիմումնագիր լրացնելու համար:

Միայն մեկ դիմումնագիր է հարկավոր լրացնել մեկ ընտանիքի համար: Դիմումնագրի թղթային օրինակ ստանալու համար հյուրընկալեք ձեր երեխայի դպրոցի գրասենյակ: Լրացնելով դիմումնագիրը, դուք կօգնեք ձեր դպրոցին ստանալ հասանելի ֆինանսավորում, նույնիսկ եթե դուք չեք բավարարում այդ ծրագրից օգտվելու պայմաններին:

Հաճախակի տրվող հարցեր

Ինչպե՞ս է անվճար և զեղչված գնով սննդի ծրագիրն ազդում դպրոցի ֆինանսավորման վրա:

Որոշակի եկամուտ ունեցող, անգլերեն սովորող, անօթևան կամ խնամատար երեխաները նպաստում են 20% ավելի ֆինանսավորում ստանալու համար: Դպրոցական այս շրջաններում, որտեղ աշակերտների 55%-ը պատկանում է այս խմբերին ավելի շատ ֆինանսավորում են ստանում: Բրբենքում, լրացուցիչ դրամը հատկացվում է դպրոցներին այս աշակերտների ծառայություններն ավելացնելու կամ բարելավելու համար: Լրացնելով դիմումնագիրը դուք նպաստում եք ձեր դպրոցին ավելի շատ դրամ ստանալու համար:

Հարկավո՞ր է դիմումնագիր լրացել յուրաքանչյուր երեխայի համար:

Ոչ, ձեզ հարկավոր է լրացնել միայն 1 դիմումնագիր նշելով ընտանիքի բոլոր երեխաների անունները:

Ո՞վ է տեղեկանալու, որ իմ ընտանիքը դիմումնագիր է լրացրել:

Մեր համակարգում ամեն ինչ մնում է գաղտնի: Այլ գործակալություններին կամ ծրագրերին ձեր տեղեկությունը հայտնելու համար հարկավոր է ստանալ ձեր թույլտվությունը:

Ո՞ր տեղ է դիմումնագիր լրացնել, եթե ես որակավորվեմ մյուս առավելությունները ստանալու համար:

Եթե դուք այժմ ստանում եք CalFresh կամ CalWORKS ծրագրերի ծառայություններ, դուք ինքնաբերաբար կորակավորվեք: Զանգահարեք Մենդի մեր գրասենյակ ստուգելու համար:

Ինչպե՞ս կարող է անվճար կամ զեղչված գնով սնունդ ստանալն ազդել SAT/ACT/AP կամ համալսարանի դիմումնագրի վճարի վրա:

11-րդ կամ 12-րդ դասարանի անվճար կամ զեղչված գնով սնունդ ստացող աշակերտները կարող են օգտվել այս ծառայությունների զեղչերից: SAT քննության դիմաց չվճարող աշակերտները կարող է ընտրել 2 հազար համալսարաններից մեկը և դիմել անվճար:

Կարո՞ղ եմ դիմումնագիրն առցանց լրացնել:

Այո կարող եք հյուրընկալել <https://family.titank12.com> և սեղմել դիմումնագրի հղումը կամ հյուրընկալել www.busdfoodservices.com և սեղմել «meal application» հղումը:

Ո՞ր տեղ է նշել սոցիալական ապահովության (SSN) իմ համարը:

Այո դուք պետք է նշեք սոցիալական ապահովության համարի վերջին չորս (4) թվերը կամ եթե այն չունեք նշեք «NO SSN» վանդակը:

Ինչպե՞ս է համացանցից օգտվելը կապված անվճար կամ զեղչված գնով սնունդ ստանալու հետ:

Արտակարգ իրավիճակների լայնաշերտ նպաստների ծրագիրը դաշնային ծրագիր է, որն այս պահին հասանելի է իրավասու ընտանիքների համար՝ Covid-19-ի համաճարակի պատճառով:

